



## ԼԻԴԻԱՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԸ ԼԻՄԻԹԻՂ

### ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ՔՎԵԱՐԿԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լիդիան ինթերնեյշնլ լիմիթիդ ընկերության (այսուհետ՝ **Ընկերություն**) Տնօրենների խորհուրդը (այսուհետ՝ **Խորհուրդ**) հավատացած է, որ իր անդամներից յուրաքանչյուրը պետք է վայելի Ընկերության բաժնետերերի վստահությունն ու աջակցությունը: Այդ նպատակով Խորհուրդը միաձայն ընդունել է սույն քաղաքականությունը, և Խորհրդի անդամների թեկնածուներից կպահանջվի հաստատել, որ իրենք պատրաստակամ են հետևել սույն քաղաքականությանը, որպես իրենց թեկնածության պայման:

Ընկերության տնօրենների միաթեկնածու ընտրություններում, որին վերաբերում է սույն քաղաքականությունը, յուրաքանչյուր տնօրեն ընտրվում է յուրաքանչյուր բաժնետիրոջ կամ նրա լիազորված անձի բաժնետոմսերի մեծամասնության քվեով տնօրենների ընտրության կապակցությամբ հայտարարվող բաժնետերերի ժողովին: Հետևաբար, եթե տնօրենի որևէ թեկնածու ստանում է ավելի շատ «չքվեարկված» ձայներ քան քվեարկված «կողմ» ձայները, նա պարտավոր է տվյալ ժողովից հետո անիջապես հրաժարականի դիմում ներկայացնել Խորհրդի նախագահին:

Խորհուրդը պարտավոր է ուսումնասիրել հրաժարականի ցանկացած դիմում և այն ընդունելու կամ մերժելու որոշում կայացնել: Հրաժարականի դիմում ներկայացրած տնօրենը իրավունք չունի մասնակցել Խորհրդի կամ դրա ենթա-հանձնաժողովների որևէ ժողովի, որի ընթացքում քննարկվելու է իր հրաժարականը:

Խորհուրդը բաժնետերերի վերոնշյալ ժողովից հետո 90 օրվա ընթացքում պետք է որոշում կայացնի և հրապարակի այն մամլո հաղորդագրության միջոցով, որի պատճենը միաժամանակ պետք է ներկայացվի Տորոնտոյի ֆոնդային բորսա, Խորհրդի անդամների կողմից անհրաժեշտ համարվող գործոնների քննարկումից հետո: Խորհուրդն ընդունում է հրաժարականը, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա են բացառիկ հանգամանքներ, որոնք երաշխավորում են տնօրենի հետագա անդամակցությունը Խորհրդում: Սակայն, եթե Խորհուրդը հրաժարվում է ընդունել հրաժարականը, այն պետք է հրապարակի նման որոշման բոլոր պատճառները համապատասխան մամլո հաղորդագրությամբ: Տնօրենի հրաժարականն ուժի մեջ է մտնում Խորհրդի կողմից այն ընդունելուց հետո:

Տնօրենների ընտրության նպատակով հրավիրվող բաժնետերերի ժողովին տրամադրվող լիազորագրի ձևը բաժնետերերին հնարավորություն է տալիս առանձին-առանձին քվեարկել հոգուտ յուրաքանչյուր թեկնածուի կամ հրաժարվել քվեարկելուց: Քվեարկության արդյունքները գրանցվում են Էլեկտրոնային փաստաթղթերի վերլուծության և որոնման համակարգի (SEDAR) կայքում:

Տնտեսվարող սուբյեկտների գործունեությունը կարգավորող կիրառվող օրենսդրության պահանջների և սահմանափակումների, ինչպես նաև Ընկերության հիմնադիր փաստաթղթերի և կանոնադրության համաձայն՝ Խորհրդի կողմից հրաժարական ընդունելու դեպքում առաջացող հաստիքը կարող է թափուր մնալ մինչև հաջորդ տարեկան ընդհանուր ժողովը: Սակայն, այն կարող է լրացվել նոր տնօրենի նշանակմամբ, ով ըստ Խորհրդի, վայելում է բաժնետերերի վստահությունը, կամ էլ, Խորհուրդը կարող է հրավիրել բաժնետերերի նոր ժողով, որի ընթացքում ներկայացվում է ղեկավարությունից որևէ թեկնածու կամ թեկնածուներ՝ թափուր հաստիքները համալրելու համար:

Սույն քաղաքականության մեջ «միաթեկնածու ընտրություն» նշանակում է հետևյալը. Ընկերության տնօրենների ընտրություններում թեկնածուների թիվը համապատասխանում է տնօրենների թափուր հաստիքների թվին: Հստակության համար, սույն քաղաքականությունը չպետք է կիրառվի այն պարագայում, երբ առկա է ձայների համար պայքար (proxy battle, այն է, երբ շրջանառվում է բաժնետերերի ժողովի համար հավաքված նյութեր, լիազորագրի տրամադրման հայտ-դիմում, և/կամ հանրային իրազեկման այլ միջոցներ են կիրառվում հոգուս մեկ կամ ավելի թեկնածուների, ովքեր չեն հանդիսանում Խորհրդի աջակցությունը վայելող թեկնածուներ կամ հանրային իրազեկման այլ միջոցներ են կիրառվում ընդդեմ Խորհրդի աջակցությունը վայելող մեկ կամ ավելի թեկնածուների):

Սույն քաղաքականությունը ժամանակ առ ժամանակ կարող է Խորհրդի կողմից փոփոխության ենթարկվել: Բացի այդ, Խորհրուրդը կարող է սույն Քաղաքականության պայմաններից շեղումներ թույլատրել, ներառյալ հետադարձ ուժով:

Սույն Քաղաքականության որևէ կետ նախատեսված չէ Ընկերության բաժնետերերի կողմից քաղաքացիական կամ նրանց անունից որևէ այլ տեսակի պատասխանատվության ենթարկելու համար:

Սույն քաղաքականությունը քննարկվել, հաստատվել և ստորագրվել է Խորհրդի կողմից 2018թ. մայիսի 10-ին: